Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
դեկտեմբերի 30 -ի N 871 - Ա
որոշման

«ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ»

ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է 2020 թ. սեպտեմբերի 27-ին սանձազերծած պատերազմի հետևանքով տեղահանված և փաստացի Հայաստանի Հանրապետությունում գտնվող Արցախի 2,000 քաղաքացիներին տրամադրել աջակցություն՝ սննդի, սան-հիգիենիկ ու անկողնային պարագաների և կենցաղային սարքերի տեսքով, ինչպես նաև ապահովել սոցիալ-հոգեբանական աջակցություն:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից՝ խնայված գումարներն ուղղելով ծրագրի շահառուների թվի ավելացմանը:
3.	Բարեգործը	«Եկեղեցիների համատեղ գործողություններ դաշինք» (ACT Alliance), Ռյու դե Ֆերնի 150, Ժնև, Շվեյցարիա:
4.	Ծրագիրը կատարողը	Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամ (ՀԿՍ): ՀՀ 1101, Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին ՀՎՀՀ՝04717139
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ Գեղարքունիքի, Արագածոտնի, Տավուշի, Շիրակի, Կոտայքի, Արմավիրի և Վայոց Ձորի մարզերում ապաստանած Արցախից ինքնաբուխ ժամանած 2,000 քաղաքացիները կստանան մարդասիրական օգնություն: Օգնություն ստացողների ցուցակները համաձայնեցվում են մարզպետարանների հետ: Բնագավառը՝ սոցիալական:
6.	Ծրագրի բյուջեն	73,500,000 դրամ (համարժեք 150,000 ԱՄՆ դոլարին)
7.	Բարեգործություն ստացողը	Արցախից ինքնաբուխ ժամանած 2,000 անձինք, ովքեր բնակվում են Հայաստանում՝ ժամանակավոր կացարաններում և հյուրընկալ ընտանիքներում:

8.	Ծրագրի իրականացման տևողությունը	20.01.2021 թ. – 20.04.2021 թ.
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի միջոցառումները հետևյալն են՝ Մննդի տրամադրում Արցախից ինքաբուխ ժամանած 2,000 անձանց: Մննդի փաթեները կազմվել են՝ հաշվի առնելով ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության օրինակելի ձևը: Շահառուների ընտրության չափանիշները հետևյալն են՝ կանայք, երեխաներ, ծերեր, հիվանդներ, հաշմանդամներ: Յուրաքանչյուր փաթեթի գինը 21,560 դրամ է: Ընդամենը ֆինանսական միջոցները՝ 43,120,000 դրամ: Իրականացման ժամկետը՝ 2021 թ. հունվարի 20-ից մինչև 2021 թ. մարտի 31-ը: Սան-հիգիենիկ փաթեթների տրամադրում Արցախից ժամանած 2,000 անձանց: Սան-հիգիենիկ փաթեները կազմելու ենք՝ հաշվի առնելով ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության օրինակելի ձևը: Շահառուների ընտրության չափանիշները հետևյալն են՝ կանայք, երեխաներ, ծերեր, հիվանդներ, հաշմանդամներ: Յուրաքանչյուր փաթեթի գինը 4,900 դրամ է: Ընդամենը ֆինանսական միջոցները՝ 9,800,000 դրամ: Իրականացման ժամկետը՝ 2021 թ. հունվարի 20-ից մինչև 2021 թ. մարտի 31-ը: Կենցաղային սարքեր և պարագաներ, կոմունալ վճարներ: Ժամանակավոր կացարաններում բնակվող Արցախցիների կենսապայմանները հնարավորինս լավ կազմակերպելու նպատակով նախատեսվում է գնել և ժամանակավոր ապաստարաններին տրամադրել կենցաղային սարքեր, անկողնային պարագաներ և վճարել կոմունալ ծառայությունների վարձերը: Տրամադրման վայրերն են՝ Արագածոտնի մարզի Սաղամոսավանի Հայորդաց տուն, Մայր Աթոռի Էջմիածնի կացարան, ՀԱԵ Կոտայքի թեմի Ծաղկաձորի և ՀԱԵ Վայոց Ձորի թեմի Հերմոնի ճամբարներ,

		ինչպես նաև հյուրընկալ ընտանիքներ Գեղարքունիքի, Արագածոտնի, Տավուշի, Շիրակի, Կոտայքի, Արմավիրի և Վայոց Ձորի մարզերում: Ֆինանսական միջոցները՝ 13,249,500 դրամ: Իրականացման ժամկետը՝ 2021 թ. հունվարի 20-ից մինչև 2021 թ. մարտի 31-ը: Սոցիալ-հոգեբանական աջակցություն Նախատեսվում է կարիքները և խնդիրները վերհանելու և դրանց արդյունավետ լուծումներ առաջարկելու նպատակով կատարել տնայցեր պատերազմից տուժած ընտանիքներ: Ծրագրի ամբողջ ժամանակաշրջանում սոցիալական աշխատողներն ու հոգևորականները շահառուներին կտրամադրեն սոցիալ-հոգեբանական աջակցություն՝ զրույցների և քննարկումների միջոցով: Այս ծառայության համար վարձատրություն չի նախատեսվում: Անձնակազմի ծախսեր Ծրագրի իրականացման համար ներգրավված են լինելու մեկ պատասխանատու Կլոր սեղան հիմնադրամից և 20 մարդ մարզերից /կացարանների աշխատակիցներ, բանվորներ, օգնությունը բաշխողներ/: Ֆինանսական միջոցները՝ 4,460,000 դրամ: (20անձ x 205,000 + 1անձ x 3ամիս x 120,000) Վարչական ծախսեր Հայաստանյան Կլոր սեղան հիմնադրամի աշխատակազմն իրականացնելու է ստուգայցեր ծրագրերի իրականացման վայրեր, ծրագրերի մշտադիտարկում, պատրաստելու է հաշվետվություններ ֆինանսավորող կազմակերպության համար, կազմակերպելու է ծրագրի աուդիտը: Ֆինանսական միջոցները՝ 2,870,500 դրամ: Իրականացման ժամկետը՝ 2021 թ. հունվարի 20-ից մինչև 2021 թ. ապրիլի 20-ը:
10.	Ձեռքբերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը,	Մանդային օգնություն Ընտանիքի յուրաքանչյուր չափահաս անդամ ստանում է մեկ փաթեթ, իսկ 0-18 տարեկան անչափահաս անդամը՝ կես փաթեթ: Մեկ փաթեթի պարունակությունը՝

	ծավալները և նախատեսվող գինը	ալյուր – 5կգ մակարոնեղեն - 3կգ ընդեղեն - 6 կգ բրինձ - 1,5կգ պահածո կանաչ ոլոռ - 3 տուփ /450գ-անոց/ ձեթ - 2լ խտացրած կաթ - 3 տուփ /350գ-անոց/ շաքարավազ - 1,5կգ տոմատի մածուկ - 1,5 կգ մրգային ջեմ - 1,5 կգ պահածոյացրած միս - 4 տուփ /550գ-անոց/: Յուրաքանչյու փաթեթի գինը 21,560 դրամ է: Ընդամենը՝ 43,120,000 դրամ (ակնկալվում է ԱԱՀ-ից ազատում): Սան-հիգիենիկ փաթեթներ Ընտանիքի յուրաքանչյուր չափահաս անդամ ստանում է մեկ փաթեթ, իսկ 0-18 տարեկան անչափահաս անդամ՝ կես փաթեթ: Մեկ փաթեթի պարունակությունը՝ անձեռոցիկ, հեղուկ օճառ, զուգարանի թուղթ, հակաբակտերիալ գել, լվացքի փոշի, դիմակներ: Յուրաքանչյուր փաթեթի գինը 4,900 դրամ է: Ընդամենը՝ 9,800,000 դրամ (ակնկալվում է ԱԱՀ-ից ազատում): Կենցաղային սարքեր և պարագաներ, կոմունալ վճարներ 1 լվացքի մեքենա, 1 սառնարան, 1 սառցարան, տաքացուցիչներ և անկողնային պարագաների հավաքածուներ կտրամադրվեն ժամանակավոր կացարաններին և հյուրընկալ ընտանիքներին: Ընդամենը՝ 13,249,500 դրամ (ակնկալվում է ԱԱՀ-ից ազատում):

11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Վարչական անձնակազմի աշխատավարձ (2 մարդ՝ 3 ամիս)՝ 774,000 ՀՀ դրամ, (1 անձ x 3 ամիս x 120,000 + 1 անձ x 3 ամիս x 138,000) Վարչական ծախսեր (կոմունալ ծախսեր, հեռահաղորդակցություն)՝ 206,500 ՀՀ դրամ Վառելիք՝ 180,000 ՀՀ դրամ (ակնկալվում է ԱԱՀ-ից ազատում) Հասարակայնության հետ կապեր՝ 731,000 ՀՀ դ րամ (ակնկալվում է ԱԱՀ-ից ազատում) Աուդիտորական ստուգում՝ 980,000 ՀՀ դրամ (ակնկալվում է ԱԱՀ-ից ազատում) Ընդամենը՝ 2,690,500 դրամ:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառա-վարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանյան Կլոր սեղան հիմնադրամն համագործակցում է տեղական ինքնակառավարման մարմինների, մարզպետարանների, ՀԱԵ թեմերի, տեղական կազմակերպությունների հետ, որոնք գործունեություն են ծավալում ՀԿՍ-ի աջակցությամբ իրականացվող ծրագրի վայրերում:
13.	Ծրագրի արդյունավետու-թյան նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի վերահսկողությունն իրականացվում է գործադիր տնօրենի, գլխավոր հաշվապահի և ծրագրերի ղեկավարի կողմից, իսկ ամենօրյա վերահսկողությունը կատարում է ծրագրի պատասխանատուն, որը պարբերաբար այցեր է կատարում ծրագրի իրականացման վայրեր՝ մշտադիտարկման նպատակով՝ ներկայացնելով հաշվետվություններ: Պարտավորվում ենք հաշվետվություն ներկայացնել համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թ-ի հունվարի 16-ի N66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ